

# Դիվանագիտական դիսկուրսի հետազոտման հայեցակերպը լեզվաբանության մեջ

Վ. Ա. Դուկասյան

Երևանի պետական բժշկական համալսարանի օտար լեզուների ամբիոն  
Corresponding author. E-mail: varduhi.ghukasyan@gmail.com

Paper received 13.02.22; Accepted for publication 25.02.22.

<https://doi.org/10.31174/SEND-Ph2022-264X77-04>

**Անփոփագիր:** Սույն հոդվածում առանձնահատուկ դիտարկվում է դիվանագիտական դիսկուրսի հետազոտման հայեցակերպը: Դիվանագիտական դիսկուրսի լեզվաբանական ուսումնասիրությունները նպատակաուղղված են դիվանագիտության լեզվի՝ որպես հանրալեզվաբանական երևույթի հետազոտմանը, ինչպես նաև դրա յուրահատկությունները բացահայտելուն: Դիվանագիտությունը՝ որպես միջպետական հաղորդակցությանը ծառայող և համաշխարհային ընդգրկում ունեցող ոլորտ, հատկանշվում է յուրահատուկ նորմերի մի ամբողջությամբ: Դիվանագիտական դիսկուրսն օժտված է անհատական իմաստային-նշանային բնութագրերով, որոնց շնորհիվ այն տարբերվում է դիսկուրսի այլ տեսակներից:

**Բանալի բառեր:** *դիսկուրս, դիվանագիտական դիսկուրս; հանրային դիվանագիտություն; հաղորդակցական մոտեցում; ինստիտուցիոնալ:*

Ժամանակակից լեզվաբանությունը արտահայտված հետաքրքրություն է ցուցաբերում դիսկուրսի հիմնախնդրի և դրա տարատեսակների հետազոտման նկատմամբ: «Դիսկուրս» եզրույթը գործածվում է լեզվաբանության, հոգեբանության, սոցիոլոգիայի, մշակութաբանության, քաղաքագիտության մեջ և այլուր: Գիտական տարբեր ուղղությունների ներկայացուցիչներ համակարծիք են, որ միայն մարդկանց համատեղ խոսքային գործունեության արդյունքների մանրակրկիտ ուսումնասիրությունը, հաշվի առնելով մշակութային և իրավիճակային համատեքստերը, թույլ կտա հետևություններ անել մարդկային գոյության բազմազան կողմերի մասին: Մյուս կողմից վերլուծության նկատմամբ մոտեցումների առեղծվածի բազմազանության գոյությունը թույլ է տալիս գիտնականներին խոսել այն մասին, որ, չնայած «դիսկուրս» եզրույթի չափազանց տարածվածությանն ու լայն կիրառությանը, արդի գիտության մեջ դեռևս գոյություն չունի նշյալ հասկացության համընդհանուր սահմանում, որը ներառեր դրա կիրառության բոլոր դեպքերը [6]: Ցայժմ «դիսկուրս» հասկացությունը նույնքան անորոշ է, որքան լեզու, հասարակություն, գաղափարախոսություն հասկացությունները: Հայտնի է, որ հաճախ ամենաանորոշ և դժվար սահմանվող հասկացություններն են դառնում ամենատարածվածները: Դիսկուրսը դրանցից մեկն է:

Լեզվաբանության մեջ դիսկուրսի էությունը մինչ օրս շարունակում է բացատրվել տարբեր տեսանկյուններից՝ լեզվափիլիսոփայության, լեզվամշակութաբանության և լեզվամարդաբանության, տեքստային լեզվաբանության, լեզվագործաբանության, հանրալեզվաբանության, ճանաչողական լեզվաբանության, խոսքի լեզվաբանության: Եվ քանի որ դիսկուրսի քննարկման վերը նշված բոլոր ուղղություններն ու մոտեցումները սերտորեն

փոխկապված են, ապա դրանով է պայմանավորվում այս երևույթի մեծ թվով սահմանումների և դրա վերլուծության ամենաբազմազան մեթոդների առկայությունը:

Դիսկուրսը գործունեության վրա հիմնված գործընթացային երևույթ է, որն արտահայտվում է տեքստում: Գործնականում համանման մեկնաբանություն են առաջարկել Թ. Ա. վան Դեյքն և մի շարք լեզվաբաններ, որոնք կարծում են, թե դիսկուրսը արտաբերված տեքստն է, այսինքն՝ կատարվող խոսքային գործողությանը վերաբերող հասկացություն է, մինչդեռ տեքստը վերացական քերականական կառույց է կամ վերացական տեսական կառուցվածք, որը վերաբերում է լեզվական համակարգին [14], «դիսկուրսն առաջանում և արտահայտվում է տեքստում և տեքստի միջոցով» [17]: Պայմանավորված հետազոտողի այս կամ այն դպրոցին պատկանելությամբ՝ դիսկուրսին կարող են վերագրվել և՛ ամենատարբեր կառուցվածքային միավորումները, և՛ միայն այն խոսքային կառույցները, որոնց բնորոշ են որոշակի հատկանիշներ: Այսպես, Պ. Մերիոյի կարծիքով, դիսկուրս եզրույթը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ.

1) «խոսք» հասկացության համարժեքը, այսինքն՝ արտաբերված ցանկացած միտք, 2) արտահայտության չափերը գերազանցող միավոր, 3) արտաբերված խոսքի ազդեցությունն այն ընկալողի վրա՝ հաշվի առնելով խոսքային իրավիճակը (գործաբանության շրջանակներում), 4) գրույցը որպես խոսքային շփման հիմնական տեսակ, 5) խոսքը խոսողի դիտանկյունից, 6) լեզվական միավորների կիրառումը, դրանց խոսքային դրսևորումները, 7) սոցիալապես կամ գաղափարապես սահմանափակ արտահայտության տիպը, օրինակ՝ ֆեմինիստական դիսկուրս, վարչական դիսկուրս, 8) տեքստի ստեղծման պայմաններն ուսումնասիրելու համար նախատեսված տեսական կառուցվածքը [10]: Ի տարբերություն նման

սահմանման՝ Թ. Ա. վան Դեյքը ուշադրությունը կենտրոնացնում է հենց հանրամշակութային փոխազդեցության վրա, որի բնորոշ գծերն են գրուցակիցների հետաքրքրությունները, նպատակներն ու ոճերը [14]: Հենց այսպիսի մոտեցումն էլ, որը լայն իմաստով կարելի է բնորոշել որպես ճանաչողական, բնորոշ է առհասարակ լեզվի մասին ժամանակակից մարդակենտրոն գիտությանը: Այդուհանդերձ, լեզվաբանական յուրաքանչյուր ուղղություն ունի իր յուրահատկությունը, և նկատելի է շեշտադրումների տեղաշարժ միևնույն երևույթները սոցիալ-մշակութային, հոգեբանական կամ գործաբանական գործոններով բացատրելիս: Իսկ ժամանակակից լեզվաբանության մեջ դիսկուրս հասկացությունը մեկնաբանվում է ոչ միանշանակորեն, այս առումով կարելի է առանձնացնել այն սահմանելու մի քանի մոտեցումներ [4].

1. Հաղորդակցական (գործառական) մոտեցում. դիսկուրսը որպես բանավոր հաղորդակցություն (խոսք, լեզվի գործածություն), կամ որպես երկխոսություն, կամ որպես գրույց:
2. Կառուցվածքային-շարահյուսական մոտեցում. դիսկուրսը որպես տեքստի հատված: Դիսկուրսը կարող է կազմված լինել երկու կամ ավելի նախադասություններից, որոնք իմաստային կապի մեջ են միմյանց հետ, ընդ որում, կապվածությունը համարվում է դիսկուրսի հիմնական հատկանիշներից մեկը:
3. Կառուցվածքային-ոճական մոտեցում. դիսկուրսը որպես խոսակցական լեզվի ոչ տեքստային կազմակերպում, որը բնութագրվում է մասերի ոչ հստակ բաժանմամբ, ասոցիատիվ կապերի գերակայությամբ, իրավիճակայնությամբ, բարձր համատեքստայնությամբ, ոճական յուրահատկությամբ:
4. Սոցիալ-գործաբանական մոտեցում. դիսկուրսը որպես տեքստ կապված հաղորդակցման իրավիճակի հետ, կամ որպես խոսքի սոցիալապես կամ գաղափարապես սահմանափակ տեսակ, կամ որպես «լեզու լեզվի մեջ», բայց ներկայացված հատուկ սոցիալական վաղեմության տեսքով [4]:

Վերոնշյալ դասակարգումը ցույց է տալիս, որ դիսկուրսն առնվազն երեք բնույթի է: Դիսկուրսի մի երեսն ուղղված է գործաբանության, հաղորդակցային տարբեր իրավիճակներին, մյուսը՝ հաղորդակցման գործընթացներին, երրորդը՝ հենց տեքստին: Հաշվի առնելով եզրույթի հակասական մեկնաբանությունները՝ Թ. վան Դեյքն առաջարկում է զանազանել դիսկուրսի երկու սահմանումներ: Լայն իմաստով դիսկուրսը համալիր հաղորդակցական իրադարձություն է, որը տեղի է ունենում խոսողի և լսողի (դիսկուրսի) միջև որոշակի ժամանակային, տարածական և այլ համատեքստում: Վան Դեյքը նաև հավելում է, որ հաղորդակցական գործողությունը

կարող է լինել բանավոր, գրավոր, ինչպես նաև ունենալ խոսքային և ոչ խոսքային բաղադրիչներ: Նեղ իմաստով դիսկուրսը բանավոր կամ գրավոր տեքստ է՝ նկատի ունենալով միայն մեկ խոսքային բաղադրիչի առկայությունը: Թեև վան Դեյքը կարծում է նաև, որ հասարակության մեջ ուսումնասիրելիս դիսկուրսը չի կարող դիտարկվել խոսողից և նրա սոցիալական գործոններից (կարծիքից և դիրքորոշումից, սոցիալական կարգավիճակից և այլն) կտրված [14]: Այսպես, Ն. Դ. Հարությունովան դիսկուրսը ներկայացնում է որպես «արտալեզվական, գործաբանական, հանրամշակութային, հոգեբանական և այլ գործոնների հետ կապված տեքստ» [2]: Նա կարծում է, որ դիսկուրսը մի երևույթ է, որն ուսումնասիրվում է ներկա ժամանակային ռեժիմում, այսինքն՝ հայտնվելուն ու զարգանալուն գուցենթաց, և այն վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել սոցիալական, մշակութաբանական և գործաբանական բոլոր գործոնները:

Ժամանակակից հետազոտողների մոտեցումները դիսկուրսի էության ըմբռնմանը միանշանակ չեն, ինչը բացատրվում է այս տերմինաբանական միավորի բազմիմաստությամբ: Կարծում ենք, որ դիսկուրսը լեզվի (և նշանային այլ համակարգերի) կարգաբերված ու համակարգված օգտագործումն է ուղղված որոշակի սոցիալական պրակտիկայի և պայմանավորված սոցիալական, գաղափարախոսական և ճանաչողական գործոններով:

Դիսկուրսների բոլոր տեսակներն ընդունված է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ **անհատական** (անձին ուղղված) և **ինստիտուցիոնալ** (կարգավիճակային-դերային): Անհատական դիսկուրսը, ըստ Վ. Ի. Կարասիկի, գոյություն ունի երկու հիմնական տարատեսակներով՝ առօրյա և կենցաղային շփումներով, ինստիտուցիոնալ դիսկուրսը ներառում է քաղաքական, դիվանագիտական, վարչական, իրավական, ռազմական, մանկավարժական, կրոնական, բժշկական, գործարար, գովազդային, մարզական, գիտական, բեմական և զանգվածային տեղեկատվական դիսկուրսները [4]:

Դիվանագիտությունը կարելի է բնութագրել որպես գիտություն արտաքին հարաբերությունների մասին: Հայտնի է, որ արտաքին քաղաքականությունն իրականացնելու նպատակով պետությունը դիվանագիտության միջոցով ներգործում է այլ պետությունների, նրանց պաշտոնական ներկայացուցիչների, ազդեցիկ քաղաքական շրջանների ու հասարակության, ինչպես նաև միջազգային դրության վրա: Դիվանագիտությունը դիտվում է որպես պետությունների միջև բարեկամության ամրապնդման, գործընկերային հարաբերություններ հաստատելու և նրանց միջև հակասությունների խաղաղ կարգավորման քաղաքական ուղիների և մեթոդների

գիտություն: Ներկայումս լայնորեն տարածված են երկկողմ և բազմակողմ դիվանագիտության տեսակները.

- երկկողմ դիվանագիտությունը վերաբերվում է երկու երկրների միջև պաշտոնական հարաբերությունների համալիրին:

- բազմակողմ դիվանագիտությունը գործողությունն է, որն իրականացվում է մի շարք պետությունների միջև պաշտոնական հարաբերությունների և դիվանագիտական մեթոդների օգնությամբ, միջազգային կոնֆերանսների կամ կազմակերպությունների շրջանակներում:

Հիրավի, դժվար թե գտնվի հասարակական գործունեության մեկ այլ ոլորտ, որտեղ բառի սխալ կամ անտեղի գործածությունը, սխալ կառուցված արտահայտությունը, իմաստի և տեքստային ըմբռնման հակասությունն ունենա ավելի խնդրահարույց և անասելի հետևանքներ, քան դիվանագիտական ոլորտն է: Դիվանագիտական լեզվաբանությունը՝ իբրև առանձին գիտակարգ, առաջացել է երկու ինքնուրույն գիտությունների՝ **լեզվաբանության** և **դիվանագիտության** միացման կետում և սերտորեն կապված է լեզվաբանական ժամանակակից գիտակարգերի հետ, հատկապես՝ հաղորդակցական և ճանաչողական լեզվաբանության հետ: Դիվանագիտական հաղորդակցության գործընթացը սովորաբար կոչվում է **դիվանագիտական դիսկուրս**. Լեզվադիվանագիտության ուսումնասիրության առարկան դիվանագիտական դիսկուրսն է:

Ժամանակակից աշխարհում դիվանագիտական դիսկուրսի հասկացությունը ուսումնասիրվում է գործունեության տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ դիվանագիտության, քաղաքականության, տնտեսագիտության և բազմաթիվ այլ ոլորտներում: Դիվանագիտությունը գիտելիքների և սկզբունքների մի ամբողջություն է, որն անհրաժեշտ է պետությունների միջև հանրային գործերը ճիշտ վարելու, անկախ պետությունների կառավարությունների միջև պաշտոնական հարաբերություններում խելամտություն և նրբանկատություն դրսևորելու, պետությունների միջև գործերը խաղաղ միջոցներով վարելու համար [9]:

Դիվանագիտական դիսկուրսը կարող է դիտվել որպես հաղորդակցային գործունեության հատուկ ձև, սակայն այն ունի մեկ հիմնական տարբերություն հաղորդակցության այլ տեսակներից: Դա նրա բազմակողմանիությունն է, որը պայմանավորված է նպատակների և խնդիրների լայն շրջանակով: Այսպես, իր աշխատանքում Լ. Մ. Տերենտին [11], հենվելով մի շարք հետազոտողների՝ Ե. Ի. Շեյգալի [12], Վ. Ի. Կարասիկի [4] և ուրիշների կարծիքների վրա, քննության է առնում դիվանագիտական դիսկուրսի կառուցվածքը դրա կազմակերպման նպատակների տեսանկյունից: Հետազոտողը կատարում է նաև

դիվանագիտական և քաղաքական դիսկուրսների համեմատական վերլուծություն, առանձնացնում դրանց նմանություններն ու տարբերությունները: Այսպես, պարզվեց, որ քաղաքականության և դիվանագիտության ամենասակնառու նմանություններից մեկը, ի տարբերություն գործունեության մի շարք այլ ոլորտների, այն է, որ քաղաքական և դիվանագիտական գործողությունները հիմնականում խոսքային բնույթի են:

Անշուշտ դիվանագիտական գործունեությունը ուղղված է ազգային շահերի առաջխաղացմանը՝ համոզելու կարողությամբ: Նման ըմբռնման շրջանակներում կարող ենք նաև ներառել **հանրային դիվանագիտության** հասկացությունը: Ամենատարածված երկու սահմանումներում Միգնիտցերը և Կումբսը հասկանում են հանրային դիվանագիտությունը որպես միջոց, որով կառավարությունը և մասնավոր անձինք և խմբերը կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգործել այն հասարակական կարծիքի և դիրքորոշումների վրա, որոնք ուղղակիորեն ազդում են մեկ այլ կառավարության արտաքին քաղաքական որոշումների վրա:

Հանրային դիվանագիտությունը տարբերվում է **ավանդական դիվանագիտությունից** այն առումով, որ այն ներառում է փոխգործակցություն ոչ միայն կառավարությունների, այլ հատկապես անկախ անհատների և կազմակերպությունների հետ:

Հանրային դիվանագիտական դիսկուրսը ունի հաղորդակցության առանձնահատուկ մասնակիցներ: Դրանք ներկայացուցիչներ են անձանց նեղ շրջանակից՝ կազմված հատուկ պատրաստված աշխատակիցներից, դիվանագիտական կորպուսի անդամներից, ինչպես նաև պետական բարձրաստիճան պաշտոնյաներից, որոնք տիրապետում են իշխանության և առավել ամբողջական տեղեկատվության միաժամանակ և՛ քաղաքական, և՛ դիվանագիտական գործողություններ իրականացնելու համար: Քաղաքական և դիվանագիտական դիսկուրսների տարբերություններից մեկն այն է, որ դիվանագիտական հաղորդակցության գերակշիռ մասը, ի տարբերություն քաղաքականի, նախատեսված չէ հանրային լայն քննարկման համար և բնույթով փակ է: Դիվանագիտական դիսկուրսի այս ձևի առանձնահատկությունը բխում է դիվանագիտության՝ որպես բանակցություն վարելու գիտության հասկացությունից: Դա թույլ է տալիս, բացի հասարակական հայեցակերպից, ընդհանուր առմամբ առանձնացնել դիվանագիտական հաղորդակցության դաշտը:

Ամփոփելով, հանրային դիվանագիտությունը այն պարզապես կարելի է սահմանել որպես օտար հանրության հետ համոզիչ հաղորդակցության ձև արտաքին քաղաքականության նպատակների

իրականացման համատեքստում: Հիմնականում խոսքը համոզիչ հաղորդակցության մասին է, որով կառավարությունները փորձում են տեղեկատվության և համոզման միջոցով ազդել արտերկրում կամ, ավելի ճիշտ, օտար երկրներում հասարակության կարծիքի և դիրքորոշումների վրա՝ քաղաքականություն վարողների վրա պատշաճ ճնշում գործադրելու և դրանով ազդելու նրանց կառավարությունների որոշումների և գործունեության վրա՝ իրենց նպատակներին և շահերին համապատասխան:

Դիվանագիտական դիսկուրսը կատարում է մի շարք գործառնություններ, որոնցից առավել նշանակալիներն են. **հաղորդակցական, քարոզչական, դրոշի, մանիպուլյատիվ, հուզազգայական, մետալեզվական, ֆատիկ կամ հարաբերական, գեղագիտական:**

**Հաղորդակցական գործառնությունը**, որը միտված է տեղեկատվություն հաղորդելուն և ուղղված է հասցեատիրոջ մտքում գոյություն ունեցող աշխարհի պատկերը վերաձևելուն, կարելի է համարել հիմնականներից մեկը դիվանագիտական դիսկուրսում: Տեղեկատվությունը (բաց և քողարկված) մեկնաբանվում է հաշվի առնելով միջազգային առկա իրավիճակը՝ հաղորդակցման ռազմավարությունների և մարտավարության միջոցով:

**Քարոզչական գործառնությունը** կիրառվում է պետությունների և կառավարությունների դիրքորոշումը ինչ-ինչ հարցերում հասարակական կարծիքին հասցնելու նպատակով, քաղաքական քայլերի ողջամտությունը դրանց ռազմաքաղաքական տեսանկյունից բացատրելու նպատակով [1]:

**Դրոշի գործառնությունը** (սպեյալտիվ) կիրառվում է պետության ներքին և արտաքին անվտանգությունն ապահովելու, վեճերը կարգավորելու նպատակով: Այն, որպես հասցեատիրոջ վրա ներազդելու գործառնություն, իրականացվում է անմիջական կոչերով և անուղղակի միջոցներով [12]:

**Մանիպուլյատիվ գործառնությունը** համարվում է հիմնականներից մեկը դիվանագիտական դիսկուրսում, որը կիրառվում է քաղաքական կարևոր հարցերի, իրադարձությունների և խնդիրների քննարկումներում հասարակական կարծիքի, ընկալման, վարքագծի վրա ազդելու կամ փոխելու նպատակով, ինչպես նաև ընդդիմախոսների վրա ներգործելը, սեփական գործողություններն արդարացնելու համար:

Դիվանագիտական հաղորդակցության մեջ **հուզազգայական գործառնությունը** (միտված հեղինակի և հասցեատիրոջ զգացմունքները արտահայտելուն) կարող է կիրառվել գործընկերների կամ ընդդիմախոսների, երրորդ անձանց խմբերի և ուրիշների գործողությունների նկատմամբ: Անհրաժեշտ հուզական մթնոլորտ ստեղծելը կարևոր նախափուլ է հասցեատիրոջը որոշակի գործողությունների դրոշելու համար: Նկատենք,

ասկայն, որ, ինչպես և գեղագիտական գործառնություն դեպքում, միջպետական դիվանագիտական փաստաթղթերում, միջազգային կազմակերպությունների պաշտոնական ակտերում և այլ փաստաթղթերում հուզազգայական գործառնություններն իրենց դեր ունի, այն ավելի բնորոշ է դիվանագիտական գրույցներին, դիվանագետների և պետությունների ղեկավարների ելույթներին [16]:

**Մետալեզվական գործառնությունը** (միտված նոր հասկացությունների սահմանմանը կամ արդեն գոյություն ունեցող հասկացությունների իմաստը բացատրելուն) պայմանավորված է դիվանագիտական յուրահատուկ տեղեկատվության և ներմասնագիտական տերմինների պարզաբանման անհրաժեշտությամբ ոչ մասնագետների (ՁԼՄ-ների, բիզնեսի ներկայացուցիչներ և այլն) հետ դիվանագետների շփումների ժամանակ:

**Ֆատիկ կամ հարաբերական գործառնությունը** նախատեսված է հաղորդակցվողների միջև կապ հաստատելու և պահպանելու համար: Այն մեկն է, որը նախատեսված է գրույց սկսելու, ակտիվ մնալու կամ ավարտելու համար: Դիվանագիտական հաղորդակցության մեջ առանձին դեպքերում առանձնահատուկ նշանակություն է ստանում ինքնին միջանձնային շփման փաստը (դիվանագիտական հարաբերությունները վերականգնելիս, դիվանագիտական ճգնաժամի պայմաններում և այլն): Ֆատիկ գործառնությունը, ակնհայտորեն, ավելի շատ դրսևորվում է դիվանագետների կամ պետությունների առաջնորդների անձնական շփումների ժամանակ. հենց ֆատիկ գործառնությունն է մեծապես որոշում բանակցությունների, խորհրդակցությունների սկզբնական փուլերի հաջողությունը:

**Գեղագիտական գործառնությունը** (առաջին հերթին ուշադրությունը կենտրոնացնում է հաղորդագրության ձևի վրա և հիմնականում իրացվում է գեղարվեստական խոսքում) միջպետական դիվանագիտական փաստաթղթերում, միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված ակտերում աննշան չափով է ներկայացված: Գեղագիտական գործառնությունը առավել բնորոշ է դիվանագիտական գրույցներին, դիվանագետների և պետությունների ղեկավարների ելույթներին. դիվանագետը պարտավոր է հետևել իր խոսքի արտահայտչականությանը [15]:

Ակներև է, որ իրական հաղորդակցության պայմաններում վերը նշված բոլոր գործառնությունները մշտական փոխազդեցության մեջ են, դրանք դժվար է սահմանազատել: Հաղորդակցական որոշ ակտերում առաջին պլան է մղվում գործառնություններից մեկը, իսկ մյուսները դրսևորվում են ավելի քիչ: Ծիսականությունն ու տեղեկատվայնությունը դիվանագիտական հաղորդակցությանը բնորոշ հատկություններ են. հաղորդակցական գործառնություն իրականացնելու համար, դիվանագիտական

տեքստերը պետք է լինեն առավելագույնս տեղեկատվական: Մյուս կողմից, դիվանագիտական հաղորդակցությունն ունի ծիսական բնույթ և առանձնանում է հաստատագրված ձևով, թեև ծիսականությունը կարող է դրսևորվել տարբեր չափերով:

Դիվանագիտական դիսկուրսի տարբերակիչ գծերն են խոսքի յուրօրինակ դարձվածքները կամ դիվանագիտական շփումներում ընդունված հատուկ դիսկուրսային բանաձևերը: Որպես կանոն՝ դրանք դիմելաձևերն են, հաճոյախոսությունները, անունները ճիշտ հնչեցնելը և այլն: Դիվանագիտական դիսկուրսում լեզվական տեսանկյունից օգտագործվում են հաղորդակցման տարբեր ռազմավարություններ և մարտավարություններ: Խոսքի ռազմավարությունը խոսքային գործողությունների համալիր է ուղղված հաղորդակցական նպատակների իրագործմանը: Ռազմավարությունը խոսողի որոշումների, խոսքային գործողությունների և լեզվական միջոցների հաղորդակցական ընտրությունների շղթա է: Մակայն, միևնույն ժամանակ, ռազմավարությունը նաև հաղորդակցության կառուցվածքում բազմազան նպատակների իրագործումն է: Քանի որ խոսքի ներգործության լեզվաբանական վերլուծության հիմնական խնդիրը կապված է խոսողի ռազմավարությունների և նրա տրամադրության տակ եղած լեզվական բոլոր ռեսուրսների ուսումնասիրման հետ, որոնցով պայմանավորված է նրա հաղորդակցական նպատակին հասնելը, ապա դիվանագիտական դիսկուրսի ուսումնասիրությունը անհնար է առանց հաղորդակցային վերլուծության:

Դիվանագիտական դիսկուրսի տեքստերը կարող են ներկայացվել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր: Նման տեքստերի բնորոշ գծերն են տեղեկատվության մեծ խտությունը, հրամայական եղանակի կիրառումը, որոնք փոխանցվում են լեզվի արտահայտչամիջոցների կիրառմամբ:

Մ. Վ. Բեյակովը նշում է դիվանագիտական դիսկուրսի հետևյալ լեզվական առանձնահատկությունները [3]. 1. դիսկուրսի մասնակիցներին մոտիվացնելը (երկխոսություն վարելու ցանկություն/չկամություն); 2. դիսկուրսի մասնակիցների տեսակետների ելակետային տարբերությունը կամ նմանությունը (կողմերը ընդդիմախոսներ կամ համախոհներ են); 3. փոխգիծման շահագրգռվածությունը (յուրաքանչյուր մասնակից կարող է ունենալ սեփական շահագրգռությունը երկխոսության արդյունքների առումով); 4. փաստարկների առկայությունը և դրանք օգտագործելու կարողությունը (միջտեքստայնություն, ըմբռնում «օտար»-«յուրային» մակարդակում); 5. դիսկուրսի մասնակիցների կարգավիճակը: Դիսկուրսի մասնակիցների կարգավիճակի մասին պետք է խոսել առանձնահատուկ, քանի որ այն կարելի է երկակի ընկալել: Մի կողմից կարևոր գործոն է

մասնակիցների միջազգային կարգավիճակը, միջազգային հեղինակությունը՝ նո՛ւյն է, թե՛ տարբեր: Սրանից է մեծապես կախված բանակցությունների ուղղվածությունը: Նման բանակցությունների տեքստը կարող է պարունակել կա՛մ օգտվածություն, ընդգծված հարգանք, կա՛մ հեզմանք, թերահավատություն և այլն: Նշյալ հետազոտողն ընդգծում է նաև դիվանագիտական դիսկուրսի ամենակարևոր լեզվական գործոնները. 1. դիսկուրսի ընթացքում օգտագործվող լեզուն (լեզվի տեսակը, երկու կամ ավելի լեզուների առկայությունը, երրորդ միջանկյալ լեզվի առկայությունը); 2. լեզվի իմացության մակարդակը; 3. լեզվական ձևությունը, այսինքն՝ խոսքը վերակազմակերպելու կարողությունը՝ ելնելով պահի թելադրանքից, և կախված ներգրավված կողմերից; 4. հնչյած խոսքի միանշանակ մեկնաբանությունը; 5. բանավոր շփման ոճը; 6. փաստարկների խոսքային ձևակերպումը [3]:

Դիվանագիտական դիսկուրսը կարող է դիտվել որպես հաղորդակցական գործունեության հատուկ ձև, որի հիմնական տարբերությունը հաղորդակցության այլ տեսակներից դրա բազմակողմանիությունն է, ինչը պայմանավորված է տարբեր համատեքստերում՝ հրապարակային և փակ, իրականացվող տարբեր նպատակներով ու խնդիրներով: Համատեքստի առանձնահատկությունը և, համապատասխանաբար, հասցեատիրոջ յուրահատկությունը՝ զանգվածային լայն լսարանը կամ հավասար, պատրաստված և տեղեկացված գործընկերը, որոշում են փոխգործակցության սոցիալական մոդելը, իսկ բուն փոխգործակցության ընթացքը, սահմանված նպատակներին հասնելու հնարավորությունը, խոսքի ռազմավարությունների ընտրությունը և լեզվական միջոցների կիրառման յուրահատկությունները անմիջականորեն կախված են հաղորդակցության մեջ ներգրավված լեզվակիր անհատների հաղորդակցային մակարդակից: Միևնույն ժամանակ, դիվանագիտական դիսկուրսին բնորոշ է նաև իրական տեղեկատվական բովանդակությունը, որը դրսևորվում է մասնագետի համար միանգամայն ակնբեր դիսկուրսային ձևերի ընտրությամբ: Օրինակ՝ “The government will have to reconsider its position” արտահայտությունը դիվանագիտական դիսկուրսի պատրաստված մասնակցին թույլ է տալիս հասկանալ, որ ցանկացած պահի երկրների միջև լավ հարաբերությունները կարող են փոխվել՝ վերածվելով թշնամականի: Իսկ եթե շփման ընթացքում այս ձևակերպումը փոխվում է հետևյալ կերպ՝ “government cannot be held responsible for the consequences” ապա դա արդեն իսկ իրական գործողություններ սկսելու ուղիղ սպառնալիք է՝ ծնելով միջադեպ, որը կհանգեցնի պատերազմի և այլն [5]:

Հաշվի առնելով լեզվաբանական տեսանկյունից վերլուծված բոլոր աշխատանքները՝ պետք է արձանագրել, որ դիվանագիտական գործունեությունն

ունի ներգործող բնույթ: Դիվանագետ գործիչները, օգտագործելով որոշակի բառային միավորներ, ազդում են ինչպես իրենց, այնպես էլ ընդդիմախոսների լսարանների վրա: Բացի այդ, դիվանագիտական դիսկուրսն օժտված է անհատական իմաստային-նշանային բնութագրերով, որոնց շնորհիվ այն տարբերվում է դիսկուրսի այլ տեսակներից:

Դիվանագիտական դիսկուրսի մասնակիցներին կարելի է բաժանել երկու խմբի.

1) դիվանագիտության ինստիտուտի ներկայացուցիչներ (արհեստավարժ դիվանագետներ) կամ պետության քաղաքական շրջանակների ներկայացուցիչներ (պետությունների և կառավարությունների ղեկավարներ, հատուկ մարմիններ), որոնք ներգրավված են պետության արտաքին քաղաքականության կարգավորման, արտերկրում պետության իրավունքների և շահերի պաշտպանության գործընթացում;

2) հասցեատերեր, որոնք հանդես են գալիս որպես հասարակության ներկայացուցիչներ:

Դիվանագիտության հարաբերությունների այս օրինաչափությունը առավել հստակ երևում է հյուպատոսական ծառայության աշխատանքում, որը կոչված է պաշտպանելու արտերկրում պետության քաղաքացիների իրավունքներն ու շահերը, նպաստելու ընդունող երկրի հետ բարեկամական հարաբերությունների զարգացմանը, առևտրային, տնտեսական, գիտական և մշակութային կապերի և զբոսաշրջության ընդլայնմանը:

Դիվանագիտական իրավունքի տեսանկյունից դիվանագիտական դիսկուրսի բնույթը պայմանավորող դիվանագիտության ինստիտուտ ասելով հասկացվում է պետությունների արտաքին հարաբերությունների կարգավորմանն ուղղված նորմերի, արտասահմանում նրանց ներկայացուցչական ձևերի, դիվանագիտական վարվելակարգի, դիվանագիտական ակտերի նախապատրաստման և ստեղծման հարցերի ամբողջությունը [7;8]: Սովորաբար դիվանագիտական շինման հրապարակային ձևեր են կոչվում դեսպանների ելույթներն իրենց ընդունող երկրում, իշխանության բարձրագույն պետական մարմինների ներկայացուցիչների ձեպագրույցներն ու մամուլի ասուլիսները, արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչների հայտարարությունները, ինչպես նաև դիվանագետների ելույթները միջազգային տարբեր կազմակերպությունների նստաշրջաններում, որոնք հետագայում տարածվում են տարբեր աղբյուրներով՝ օգտագործելով զանգվածային լրատվության միջոցների հնարավորությունները:

Այսպիսով, դիվանագիտական դիսկուրսը կարելի է դիտարկել որպես հաղորդակցական գործունեության հատուկ ձև, որի հիմնական տարբերությունը հաղորդակցության այլ տեսակներից դրա բազմակողմանիությունն է, ինչը պայմանավորված է տարբեր համատեքստերում՝ հրապարակային և փակ, իրականացվող տարբեր նպատակներով ու խնդիրներով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Аникина Ю. В., Владимирова С. В. Сущность политических переговоров // Взаимодействие науки и общества: сб. статей Междунар. научно-практич. конф. (1 марта 2016 г.): в 4 ч. Ч. 4. Уфа: АЭТЕРНА, 2016. С. 164–166.
2. Арутюнова Н.Д. Дискурс. Речь // Лингвистический энциклопедический словарь / гл. ред. В.Н. Ярцева. – 2-е изд., доп. – М.: Большая российская энциклопедия, 2002. – С. 136–137, 414–416.
3. Беляков М.В. Характер эмотивности дипломатического дискурса // Вестник Российского университета дружбы народов. Серия: Лингвистика. – 2015. – № 2. – С. 124–132.
4. Карасик В.И. О типах дискурса // Языковая личность: институциональный и персональный дискурс: Сб. науч. тр. - Волгоград: Перемена, 2000. - С. 5 - 20.
5. Ковалев А. Азбука дипломатии. М: Интерпракс, 1993.
6. Кубрякова Е. С. Язык и знание: На пути получения знаний о языке: Части речи с когнитивной точки зрения. Роль языка в познании мира / Рос. академия наук. Ин-т языкознания. М.: Языки славянской культуры, 2004.
7. Лапин Г.Э. Консульская служба. Учебное пособие. М.: Междунар. отношения, 2002.
8. Соловьев Э.Я. Основы дипломатического права: Учебное пособие. М.: Ось-89, 2005.
9. Сатоу Э. Руководство по дипломатической практике. М.: Издательство Института международных отношений, 1961.
10. Серио П. Как читают тексты во Франции// Квадратура смысла: Французская школа анализа дискурса: Пер. с фр. и португ. / Общ. ред. и вступ. ст. П. Серио; предисл. Ю.С. Степанова. М: ОАО ИГ «Прогресс», 2002. - С. 12-53.
11. Терентий Л. М. Дипломатический дискурс как особая форма научной коммуникации // Вопр. Психоллингвистики. - М., 2015. - № 2 (24). - С. 166-185
12. Шейгал, Е.И. Семиотика политического дискурса: монография. Волгоград: Перемена, 2000.
13. Bleiker Roland The Aesthetic Turn in International Political Theory. Millennium: Journal of International Studies 30.3, 2001, 509–533
14. Dijk, T.A van. Discourse, power and access. Texts and practices: readings in critical discourse analysis ed. by Carmen Rosa Caldas-Coulthard and Malcolm Coulthard, 84-104. London: Routledge, 1996.
15. Hozić, Aida A., ed. Special Issue: Forum on The Aesthetic Turn at 15.Millennium: Journal of International Studies 45.2, 2017.
16. Jeffery Renee. Reason and Emotion in International Ethics. Cambridge, UK: Cambridge University Press, 2014.
17. Kress G. Ideological structures in discourse. In Teun A. Van Dijk (Ed.), Handbook of discourse analysis vol.4 (pp. 27-42). London: Academic Press, 1985.

## REFERENCES

1. Anikina Yu. V., Vladimirova S. V. Essence of political negotiations // Interaction of science and society: coll. articles of the International scientific and practical. conf. (March 1, 2016): at 4 h. Part 4. Ufa: AETERNA, 2016, pp. 164–166.
2. Arutyunova N.D. Discourse. Speech // Linguistic Encyclopedic Dictionary / ch. ed. V.N. Yartsev. - 2nd ed., add. - M.: Great Russian Encyclopedia, 2002. - S. 136-137, 414-416.
3. Belyakov M.V. The nature of the emotiveness of diplomatic discourse // Bulletin of the Peoples' Friendship University of Russia. Series: Linguistics. - 2015. - No. 2. - P. 124–132.
4. Karasik V.I. On types of discourse // Linguistic personality: institutional and personal discourse: Sat. scientific tr. - Volgograd: Change, 2000. - S. 5 - 20.
5. Kovalev A. ABC of diplomacy. M: Interpraks, 1993.
6. Kubryakova E. S. Language and knowledge: On the way to obtaining knowledge about the language: Parts of speech from a cognitive point of view. The role of language in the knowledge of the world / Ros. academy of sciences. Institute of Linguistics. M.: Languages of Slavic culture, 2004.
7. Lapin G.E. Consular Service. Tutorial. M.: Intern. relations, 2002.
8. Soloviev E.Ya. Fundamentals of diplomatic law: Textbook. M.: Os-89, 2005.
9. Satow E. Guide to diplomatic practice. Moscow: Publishing House of the Institute of International Relations, 1961.
10. Serio P. How texts are read in France. // Quadrature of meaning: French school of discourse analysis: Per. from fr. and Portuguese. / Common ed. and intro. Art. P. Serio; foreword Yu.S. Stepanova. M: JSC IG "Progress", 2002. - S. 12-53.
11. Terenty L. M. Diplomatic discourse as a special form of scientific communication // Vopr. Psycholinguistics. - M., 2015. - No. 2 (24). - pp. 166-185
12. Sheigal, E.I. Semiotics of political discourse: monograph. Volgograd: Change, 2000.

**The aspect of diplomatic discourse in linguistics****Varduhi A. Ghukasyan**

**Abstract.** This article discusses the concept of diplomatic discourse research. The linguistic studies of the diplomatic discourse are aimed at the study of the language of diplomacy as a sociolinguistic phenomenon, as well as at discovering its peculiarities. Diplomacy, as a world-wide field of interstate communication, is characterized by a set of unique norms. Diplomatic discourse has individual semantic-symbolic characteristics, due to which it differs from other types of discourse.

**Keywords:** *discourse; diplomatic discourse; public diplomacy; communicative approach; institutional.*